

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց

(1906/B06) «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի
պրակտիկան»

Որակավորման աստիճան

Բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց

դասախոս Ս.Սահակյանը

ԵՊՀ հրատարակչություն

Երևան 2013

Հրատարակվում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի և
Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի որոշումներով

Միրանուշ Ստեփանի Սահակյան

ԾՐԱԳԻՐ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան»
դասընթացի. – Եր.: ԵՊՀ հրատ., 2013, 11 էջ

SYLLABUS “The Practice of the ECtHR” – Yerevan: YSU Press, 2013, 11 p.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան» (1906/B06) ուսումնական դասընթացի ծրագիրը նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրով սովորող «Միջազգային-իրավական» մասնագիտացման ուսանողների համար: Այն օգնում է ամբողջական պատկերացում կազմել դասընթացի շրջանակներում դասավանդվող նյութի բովանդակության վերաբերյալ: Ծրագիրը պարունակում է դասընթացն ուսումնասիրելու մեթոդական ցուցումներ, ներածություն, որում շարադրված են ծրագրի հիմնական նպատակները, առարկայի դասավանդման ակնկալվող արդյունքները, դասաժամերի քանակն ու տեսակները, ուսանողների տեսական գիտելիքների ու գործնական կարողությունների ստուգման անցկացման ձևերն ու գնահատման չափանիշները, նախատեսված կրեդիտների քանակը, ինչպես նաև դասընթացի շրջանակներում ուսումնասիրման ենթակա թեմաների ու դրանց մեջ ներառվող հարցերի հակիրճ նկարագրությունը և դրանց լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ իրավական ակտերի ու գրականության ցանկը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան՝ Ծրագրի ներածություն

1906/B06 «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան» (2 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (24 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար, 28 ժամ ինքնուրույն աշխատանք)

6-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը

Սույն դասընթացը նախատեսված է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողների համար: Դասընթացը նպատակն է լուսաբանել մարդու իրավունքների եվրոպական համակարգում առանցքային տեղ զբաղեցնող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկան և դատարանի նախադեպային իրավունքը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- Մարդու իրավունքների եվրոպական պաշտպանության առանձնահատկությունների վերաբերյալ,
- Եվրոպական դատարանի իրավասության, գործունեության, ընդունելիության չափանիշների, գործի քննության ընթացակարգերի
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի:

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ընկալել նախադեպային իրավունքի հասկացությունը և բնորոշ գծերը,
- հասկանալ մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի դերը ներպետական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ձևավորման գործում,
- մեկնաբանել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան,
- կիրառել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերը:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- օգտվել դատարանին վերաբերող տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ,
- վերլուծել փաստեր, կիրառել նախադեպեր, կատարել հետևություններ,
- ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված երկու ընթացիկ քննություններից առաջինը բանավոր է, իսկ երկրորդը գրավոր (9-ական միավոր):

Բանավոր հարցում: Ներառում է 1-5 թեմաները: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը առավելագույնը 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Գրավոր հարցում: Ներառում է 6-9 թեմաները: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը առավելագույնը 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Դասընթացի բովանդակությունը

Թեմա 1. Ներածություն: Եվրոպայի խորհուրդը և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան /2 ժամ դասախոսություն/

1. Եվրոպայի խորհրդի ձևավորման պատմական նախադրյալները:
2. ԵՄ մարմինները և դրանց գործառույթների ու իրավասության տարանջատումը:
3. Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրոպայի խորհրդին:
4. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան և լրացուցիչ արձանագրությունները:
5. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ընդհանուր բնութագիրը:

Հարցեր 1-5-Ներածական բնույթի դասախոսություն

Թեմային վերաբերող գրականություն

Philip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, Oxford 2005
http://www.legalguide.am/doc/materials_on_website/material_arm/translation/chapter1.pdf

Թեմա 2. Կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանության կառուցակարգը / 2 ժամ դասախոսություն/

1. Կոնվենցիայով նախատեսված ինստիտուցիոնալ պաշտպանության համակարգի առանձնահատկությունները և արդյունավետությունը
2. Կոնվենցիայով նախատեսված հսկողական կառուցակարգը

Հարցեր 1-2-Ներածական բնույթի դասախոսություն

Թեմային վերաբերող գրականություն

Phillip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, Oxford 2005, 1-15pp.
http://www.legalguide.am/doc/materials_on_website/material_arm/translation/chapter1.pdf

Թեմա 3. Ընթացակարգը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում/ 2 ժամ դասախոսություն/

1. Դատարան ներկայացվող գանգատի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները

2. Դատարանի Կանոնները: Դատավարության լեզուն և ներկայացուցչությունը: Դատական ծախսեր
3. Միջանկյալ միջոցների բնույթը և դրանց կիրառման կարգը
4. Լսումների հրապարակայնությունը

Հարցեր 1-4-Ներածական բնույթի դասախոսություն

Թեմային վերաբերող գրականություն

Philip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, Oxford 2005, 16-77pp.
http://www.legalguide.am/doc/materials_on_website/material_arm/translation/chapter%202.pdf

Թեմա 4. Ընթացակարգը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Գանգատի ընդունումը/ 4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար/

1. Գանգատի ընդունելիության չափանիշների ընդհանուր բնութագիրը և դրանց նպատակը
2. Պաշտպանության ներպետական միջոցների սպառման պարտականությունը
3. Գանգատը ներպետական վերջնական որոշման կայացման պահից վեցամսյա ժամկետի ընթացքում ներկայացնելու պարտականությունը
4. Կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի գանգատներ
5. Ակնհայտ անհիմն գանգատներ

Հարցեր 1-5-Դասախոսություն՝ ներառյալ ներածական բնույթի նյութի մատուցում, ինչպես նաև ուսանողների մասնակցությամբ քննարկում
 Հարցեր 1-5-Սեմինար՝ մատուցված նյութի հիման վրա տիպային իրավիճակների և խնդիրների լուծում, բանավոր հարցադրումների պատասխանում:
 Ինքնուրույն աշխատանք – Թեմային վերաբերող գրականության ցանկում ներկայացված նախադեպերի ուսումնասիրություն:

Թեմային վերաբերող գրականություն

Phillip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, Oxford 2005, 16-158pp.
http://www.legalguide.am/doc/materials_on_website/material_arm/translation/chapter5.pdf

Իլասշուն և այլոք ընդդեմ Սոլդովայի և Ռուսաստանի (իրավասության գնահատում)
 Իսսան և այլոք ընդդեմ Թուրքիայի
 Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի
 Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի

Թեմա 5. Կոնվենցիայի հիմնարար սկզբունքները /4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար /

1. Լրացուցուցչությունը (Subsidiarity)
2. Ժողովրդավարական հասարակությունում՝ և իրավական որոշակիություն
3. Համամասնություն և գնահատման հայեցողություն (Margin of appreciation)

4. Կոնվենցիան՝ որպես կենդանի գործիք և նախադեպի դոկտրինի բացակայությունը
5. Գործնական և արդյունավետ իրավունքներ
6. Ինքնավար հայեցակարգեր
7. Դրական պարտավորություններ և իրավունքների սահմանափակում
8. Իրավունքների չարաշահման արգելք
9. Կոնվենցիայի դրույթների մեկնաբանումը Վիեննայի կոնվենցիայի և միջազգային իրավունքին համապատասխան
10. Ապացուցման կանոնները և ապացուցման պարտականությունը
11. Գանգատի իրավունքի արդյունավետ իրականացում

Հարցեր 1-11- Դասախոսություն՝ ներառյալ ներածական բնույթի նյութի մատուցում, այնպես էլ ուսանողների մասնակցությամբ քննարկում
 Հարցեր 1-11-Սեմինար՝ մատուցված նյութի հիման վրա տիպային իրավիճակների և խնդիրների լուծում, բանավոր հարցադրումների պատասխանում:

Թեմային վերաբերող գրականություն

Phillip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, Oxford 2005, էջեր 159-177.

Նախադեպային իրավունքի ուսումնասիրություն և վերլուծություն

Թեմա 6. Հոդված 2- Կյանքի իրավունք /2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար /

1. Կյանքի իրավունքի պաշտպանության սահմանները:
2. Կյանքի իրավունքի պաշտպանության նյութական և պրոցեդուրալ ասպեկտները:
3. Կյանքի իրավունքը և թույլատրելի բացառությունները:

Հարցեր 1-3-դասախոսություն ներառյալ ներածական բնույթի նյութի մատուցում, այնպես էլ ուսանողների մասնակցությամբ քննարկում

Հարցեր 1-3-ինքնուրույն աշխատանք՝ կյանքի իրավունքի պաշտպանությանը վերաբերող՝ գրականության ցանկում նախատեսված նախադեպերի ուսումնասիրություն:

Հարցեր 1-3-սեմինար մատուցված նյութի և ինքնուրույն աշխատանքի հիման վրա տիպային իրավիճակների և խնդիրների լուծում, բանավոր հարցադրումների պատասխանում:

Թեմային վերաբերող գրականություն

Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005, էջեր 9-44:

Վ. Քոչարյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, Երևան 2007, էջեր 7-68:

Պարտադիր նախադեպեր

Մաքքենն ընդդեմ Միացյալ Թագավորության
Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության
Պրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության
Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի

**Թեմա 7. Հոդված 3 – Խոշտանգումների արգելում /2 ժամ դասախոսություն, 2 ժամ
սեմինար /**

1. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի կիրառման շրջանակը:
2. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված վերաբերմունքի տեսակները և դրանց տարբերակումը: Վերաբերմունք և պատիժ հասկացությունների տարբերակումը:
3. Էքստրադիցիայի և արտաքսման թույլատրելիությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո:
4. Պետությունների նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների բնույթը Կոնվենցիայի 3-րդ հոդվածների ներքո:

Հարցեր 1-4-դասախոսություն՝ ներառյալ ներածական բնույթի նյութի մատուցում և ուսանողների մասնակցությամբ քննարկում:

Հարցեր 1-4- ինքնուրույն աշխատանք՝ խոշտանգումների արգելմանը վերաբերող՝ գրականության ցանկում նախատեսված նախադեպերի ուսումնասիրություն:

Հարցեր 1-4-սեմինար՝ մատուցված նյութի և ինքնուրույն աշխատանքի հիման վրա տիպային իրավիճակների և խնդիրների լուծում, բանավոր հարցադրումների պատասխանում:

Թեմային վերաբերող գրականություն

Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005, էջեր 45-68:

Վ. Քոչարյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, Երևան 2007, էջեր 78-160:

Պարտադիր նախադեպեր

Հարությունյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
Իլաշկուն և այլոք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի
Կոստելլո Ռոբերտսոն ընդդեմ Միացյալ Թագավորության
Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության
Շալալն ընդդեմ Միացյալ Թագավորության
Ակսոյն ընդդեմ Թուրքիայի
Պիրսն ընդդեմ Հունաստանի

**Թեմա 8. Հոդված-5 Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք,
Հոդված-6 Արդար դատաքննության իրավունք /2 ժամ դասախոսություն/**

1. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը:
2. Ազատությունից զրկելու թույլատրելի դեպքերի շրջանակը և դրանց էությունը:
3. Կոնվենցիայի 6-1-րդ հոդվածով նախատեսվող «արդար դատաքննության իրավունքի» ասպեկտներն ու դրանց բովանդակությունը:
4. Քրեական գործերով արդար դատաքննության իրավունքի երաշխիքները:

Հարցեր 1-4-դասախոսություն՝ ներածական բնույթի նյութի մատուցում և քննարկում
 Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք՝ թեմային վերաբերող գրականության և ազատության և անձնական անձեռնմխելիության և արդար դատաքննության իրավունքներին վերաբերող՝ գրականության ցանկում նախատեսված նախադեպերի ուսումնասիրություն:

Թեմային վերաբերող գրականություն

Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005, էջեր 69-193:

Վ. Քոչարյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, Երևան 2007, էջեր 185-300:

Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005, էջեր 194-241, 394-415:

Պարտադիր նախադեպեր

Նիկողոսյանն ու Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
 Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
 Տոմասին ընդդեմ Ֆրանսիայի
 Ակսոյն ընդդեմ Թուրքիայի
 Էնգելն ընդդեմ Նիդերլանդների
 Դեմիցովին ընդդեմ Սալթայի
 Օջալանն ընդդեմ Թուրքիայի
 Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի

Թեմա 9. Հոդված 8- Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք, Հոդված-9 Ստբի, խղճի, կրոնի ազատություն, Հոդված-10 Արտահայտվելու ազատություն և Հոդված-11 Միավորվելու ազատություն */Ժամ դասախոսություն/*

1. Գնահատման հայեցողությունը կոնվենցիայի 8-11-րդ հոդվածների ներքո:
2. Կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքների շրջանակը:
3. Կոնվենցիայի 9-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքների շրջանակը:
4. Կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքների շրջանակը:
5. Կոնվենցիայի 11-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքների շրջանակը:

Հարցեր 1-4-Ներածական բնույթի դասախոսություն:

Հարցեր 1-4-Ինքնուրույն աշխատանք՝ գրականության ցանկում ներառված մտքի, խղճի, կրոնի, արտահայվելու և միավորվելու ազատությունների պաշտպանությանը վերաբերող պարտադիր նախադեպերի ուսումնասիրություն:

Թեմային վերաբերող գրականություն

Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005, էջեր 288-393:

Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005, էջեր 317-357:

Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005, էջեր 358-393:

Պարտադիր նախադեպեր

Գասկինն ընդդեմ Միացյալ Թագավորության
Վոն Հանովերն ընդդեմ Գերմանիայի
Հոֆմանն ընդդեմ Ավստրիայի
Գալստյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
Մելտեքսն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության
Ջերսիլդն ընդդեմ Դանիայի
Մյուլերը և այլոք ընդդեմ Շվեյցարիայի

1-ին Ընթացիկ ստուգման հարցաշար

1. Եվրոպայի խորհրդի ձևավորման պատմական նախադրյալները:
2. ԵՄ մարմինները և դրանց գործառույթների ու իրավասության տարանջատումը:
3. Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրոպայի խորհրդին:
4. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան և լրացուցիչ արձանագրությունները:
5. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ընդհանուր բնութագիրը:
6. Կոնվենցիայի հիմնարար սկզբունքները
7. Լրացուցուցությունը (Subsidiarity)
8. Ժողովրդավարական հասարակությունում՝ և իրավական որոշակիություն
9. Համամասնություն և գնահատման հայեցողություն (Margin of appreciation)
10. Կոնվենցիան՝ որպես կենդանի գործիք և նախադեպի դոկտրինի բացակայությունը
11. Գործնական և արդյունավետ իրավունքներ
12. Ինքնավար հայեցակարգեր
13. Դրական պարտավորություններ և իրավունքների սահմանափակում
14. Drittwirkung
15. Իրավունքների չարաշահման արգելք
16. Կոնվենցիայի դրույթների մեկնաբանումը Վիեննայի կոնվենցիայի և միջազգային իրավունքին համապատասխան
17. Ապացուցման կանոնները և ապացուցման պարտականությունը
18. Գանգատի իրավունքի արդյունավետ իրականացում
19. Կոնվենցիայով նախատեսված ինստիտուցիոնալ պաշտպանության համակարգի առանձնահատկությունները և արդյունավետությունը
20. Կոնվենցիայով նախատեսված հսկողական կառուցակարգը
21. Անհատական և միջպետական գանգատներ
22. Դատարան ներկայացվող գանգատի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները
23. Դատարանի Կանոնները: Դատավարության լեզուն և ներկայացուցչությունը: Դատական ծախսեր
24. Միջանկյալ միջոցների բնույթը և դրանց կիրառման կարգը
25. Լսումների հրապարակայնությունը
26. Գործերի քննության ընթացակարգը
27. Ընդունելիության ընթացակարգը
28. Գանգատի ընդունելիության չափանիշների ընդհանուր բնութագիրը և դրանց նպատակը
29. Պաշտպանության ներպետական միջոցների սպառման պարտականությունը
30. Գանգատը ներպետական վերջնական որոշման կայացման պահից վեցամսյա ժամկետի ընթացքում ներկայացնելու պարտականությունը
31. Կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի գանգատներ
32. Ակնհայտ անհիմն գանգատներ
33. Գործի քննության ընթացակարգը Պալատում
34. Ընթացակարգը Մեծ պալատում
35. Վճռի կայացումը, դրա մեկնաբանությունը և կատարումը

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Jacobs & White, European Convention on Human Rights, 4th edition Oxford 2006
2. Phillip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, Oxford 2005, (for the practitioner) (Armenian version of the book will be circulated).
3. Донна Гомьен, Девид Харрис, Лео Зваак. Европейская конвенция о правах человека и Европейская социальная хартия: право и практика. М.1998.
4. Վ. Հովհաննիսյան, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների Մեկնաբանություն, Երևան 2005
5. Վ. Քոչարյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, Երևան 2007.

ՊԱՐՏԱԴԻՐ ՆԱԽԱԴԵՊԵՐ

1. Հարությունյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
2. Գալստյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
3. Մելտեքսն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
4. Նիկողոսյանն ու Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
5. Մինասյանն ու Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
6. Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
7. Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
8. Երանոսյանը և այլոք ընդդեմ Հայաստանի Հանրապետության
9. Բայաթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության
10. Ակդիվարը և այլոք ընդդեմ Թուրքիայի
11. Մաքքենն ընդդեմ Միացյալ Թագավորության
12. Իլասկուն և այլոք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի
13. Իսսան և այլոք ընդդեմ Թուրքիայի
14. Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի
15. Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի
16. Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության
17. Պրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության
18. Նաչովան և այլոք ընդդեմ Բուլղարիայի
19. Տոմասին ընդդեմ Ֆրանսիայի
20. Կոստելո-Ռոբերտսն ընդդեմ Միացյալ Թագավորության
21. Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության
22. Շալալն ընդդեմ Միացյալ Թագավորության
23. Ակսոյն ընդդեմ Թուրքիայի
24. Պիրսն ընդդեմ Հունաստանի
25. Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների
26. Դեմիցովին ընդդեմ Մալթայի
27. Օջալանն ընդդեմ Թուրքիայի
28. Գասկինն ընդդեմ Միացյալ Թագավորության
29. Վոն Հանովերն ընդդեմ Գերմանիայի

30. Հոֆմանն ընդդեմ Ավստրիայի
31. Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության
32. Ջերսիլդն ընդդեմ Դանիայի
33. Մյուլերը և այլոք ընդդեմ Շվեյցարիայի
34. Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի